ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ Է ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

09.10.2014 07:52

Հարգելի փաստաբաններ,
ՀՀ փաստաբանների պալատի կողմից հավատարմագրված Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA/ROLI) հայաստանյան ներկայացուցչությունը փաստաբանների համար կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ:
Դասընթացները տեղի կունենան 2014թ. հոկտեմբերի 11-ին և 25-ին Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA/ROLI) հայաստանյան ներկայացուցչության գրասենյակում (ք. Երևան, Ալեք Մանուկյան, 9 շենք, 4-րդ հարկ, 406 սենյակ), ժամը 11:00-ից մինչև 15:00-ը:
Դասընթացների թեմաներն են.
1. «Քրեական գործերով պաշտպանական մարտավարության և ռազմավարության մշակում» (11.10.2014թ.).
2. «Ապացույցներ» (25.10.2014թ.).
Դասընթացները կվարի փաստաբան Հայկ Ալումյանը:
Տեղերը սահմանափակ են' 25 մասնակից յուրաքանչյուր դասընթացի համար: Մասնակցելով դասընթացին' յուրաքանչյուր փաստաբան կլրացնի պարտադիր վերապատրաստման 6 ժամ: Խնդրում ենք գրանցվել միայն այն փաստաբաններին, ովքեր վստահ են, որ կմասնակցեն վերապատրաստմանը:
Լրացուցիչ տեղեկությունների և դասընթացին գրանցվելու համար խնդրում ենք մինչև 2014թ. հոկտեմբերի 10-ը զանգահարել ABA/ROLI Հայաստանյան ներկայացուցչության գրասենյակ 010554991 և 010556449 հեռախոսահամարներով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })